ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 10 *Общественные науки*

Ա. Ահարեկյան

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արևմտյան Եվրոպայի պատմությունից հայտնի է, որ ֆեոդալական հասարակության վաղագույն շրջանում շահագործման ձևերից մեկը, երբեմն նույնիսկ հիմնական ձևը, հանդիսանում էր այն, որ ֆեոդալն իր ընտանիքով, մերձավորների և իրեն ենթակա մարդկանց ամբողջ խմբով շրջում էր մի վայրից մյուսը և կերակրվում տեղի բնակչության հաշվին։ Կիևյան Ռուսաստանում այդ նույն երևույթը կոչվում էր полюдье.

Ֆեոդալի շրջակերակրվելը պայմանավորված էր իրենց՝ շահագործական հարաբերությունների պրիմիտիվ աստիճանով, երբ հարկերի և այլ գանձումների չափը սահմանափակված էր ֆեոդալի զուտ սպառողական պահանջներով, երբ փակ բնատնտեսությունն էր առկա, և փոխանակային հարաբերությունները վերին աստիճանի ցածր մակարդակի վրա էին ընտրվում։

Շահագործման նույն ձևը, ինչպես կտեսնենք Մովսես Խորենացու պահպանած վկայությունից, տեղի է ունեցել նաև Արշակունյան շրջանի Հայաստանում։ Խորենացին Մամիկոնյան նախարարական տոհմի ծագման մասին պատմում է, թե Ճենաց թագավորի դայակի որդիներից Մամգունը, իր եղբոր չարախոսության զոհը դառնալով, փախչում է Պարսկաստան, ուր և ապաստան է գտնում։ Արտաշիր թագավորի մահից հետո, երբ Շապուհն էր գահակալում (241—279), Ճենաց թագավորը պահանջում է իրեն հանձնել փախստականին։ Շապուհը բարվոք է համարում չհանձնել Մամգունին, այլ արտաքսել նրան Պարսկաստանից։ Մամգունը ակամայից գալիս է Հայաստան՝ իր ընտանիքով, մերձավորներով և իրեն ենթակա մարդկանց բազմությամբ (աղխիւ)։ Այդ ժամանակ Հայոց Տրդատ թագավորը զորքով շարժվում էր դեպի Պարսկաստան՝ Շապուհի դեմ կռվելու։ Մամգունն ընդառաջ է գնում Տրդատին, իսկ վերջինս նրան իր հետ պատերազմի չի տանում, սակայն նրան իր ամբողջ խմբով ընդունում է, տեղ է տալիս և ոռճիկ է նշանակում կերակրվելու համար՝ շնորհելով նրանց իրավունք տարիներ շարունակ մի վայրից մյուսը փոխադրվել և կերակրվել տեղի բնակչության հաշվին։ Իերում ենք Խորենացու վկայության մեզ հետաքրքրող մասը.

«Իսկ Մամգոնայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ գալըստեանն Տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատ ընկալաւ գնա, բայց ընդ իւր ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նոցա և ոռճիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղւոջէ ցբազանդակ ամս»։[1]

[1] *Մ. Խորենացի՝ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913 թ., գիրք Բ. գլուխ ՁԱ, էջ 223։ Ընդգծումը մերն է։ Ա. Ա.*

Այս վկայության վերջին մասից պարզ երևում է, որ Մամգունին կալվածներ չեն տրամադրվել, այլ տրվել է միայն ապաստան նրա հետ գտնվող բազմությանը և ոռճիկ՝ կերակրվելու համար, այն եղանակով, որ պեսզի նրանք տարիներ շարունակ տեղից տեղ շրջեն և կերակրվեն։ Կերակրվել այստեղ պետք է հասկանալ այս կամ այն վայրում լինելու ժամանակամիջոցին. նրանց ընակեցումը, նրա ազգակիցների և ենթակա մարդկանց ու նրանց անասունների կերակրումը տվյալ վայրի բնակչության հաշվին։ Վկայության այն մասը, որ վերաբերում է Մամգունի խումբը պատերազմին մասնակից դարձնելուն կամ չդարձնելուն (տվյալ դեպքում նրանք մասնակից չեն դարձվում), ցույց է տալիս, որ այդ խումբը բավականին մեծ պետք է լիներ։ Հենց ինքը ռազմ բառը, որին համապատասխանում է ռուսական чеядь-ը, ենթադրում է մարդկանց բավականին ստվար բազմություն։

Շրջել-կերակրվելը սոսկական սովորույթ չէր, ոչ էլ բնակչության կողմից կտրվին հյուրընկալության մի ձև։ Այն պարտադիր բնույթի սոցիալական երևույթ էր և, որպես այդպիսին, հանդիսանում էր բնակչության շահագործման պրիմիտիվ մի ձև։

Եթե Արշակունյան Հայաստանում ֆեոդալների շրջել-կերակրվելը գոյություն ունեցած չլիներ, ապա Տրդատը չէր կարող այդ կարգը պատահականորեն հորինել և մացնել։ Մնում է ենթադրել, որ ֆեոդալական շահագործման այդ հնագույն ձևը—ֆեոդալի՝ իր մարդկանցով շրջել-կերակրվելը հին Հայաստանին հայտնի երևույթ է եղել։ Այդ պարզ և անառարկելի կերպով երևում է Խորենացու վերը բերված վկայությունից, թեև այն իր տեսակի մեջ եզակի վկայություն է։

Խորենացին պահպանել է և մի այլ տեղեկություն, որի հիման վրա կարելի է ենթադրել, թե շահագործման այդ ձևը երբ է դոյություն ունեցել և երբ է տեղի ավել ու անհետացել։ Խորենացին շարունակելով իր տեղեկությունները Մամգունի մասին, պատմում է, թե Սլկունյաց տոհմը Սղուկ Նահապետի գլխավորությամբ ապաստանում է Տրդատի դեմ և ամրանում Ողական ամրոցում, օգնական ունենալով Սիմ սարի ստորոտի բնակչությունը։ Տրդատը մեծ պարգևներ է խոստանում նրան, ով իր մոտ կբերի Սլկունյաց Նահապետին—սպանված թե կենդանի։ Այդ բանը հանձն է առնում Մամգունը, որը գնում է Տարոն Սլկունյաց Նահապետի մոտ, կեղծ դաշն է դնում նրա հետ, մտերմություն է ցույց տալիս և որսի ժամանակ դավադրաբար սպանում է ապստամբ Սղուկ Սլկունուն։ Ինչպես կվում հարցի տեսակետից հետաքրքրական է այդ ընդարձակ վկայության այն մասը, որը բերվում է որպես Մամգունի խոսքերը ուղղված Սլկունուն.

«Վտանգ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատայ վասն որոյ գնաց գկողմամբք Աղուանից պատերազմել ընդ ամենայն լեռնոտեայսն. վասն որոյ, մեր է ժամանակ ի ճահ խորհել և գործել որ ինչ կամք են. զի խորեալ եմ դաշնաւոր լինել ընդ քեզ՝ վասն արեամարբանաց իմոց որ ի բազաւորեն»։[1]

[1] Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց, գիրք Բ. գլ. ՁԴ, էջ 228—229։ (Ընդգծումը մերն է։ Բ. Ա.)։

Թե ի՞նչ արհամարհանքի մասին է խոսքը. միայն երկու ենթադրություն է հնարավոր։ Նախ՝ թերևս նկատի է առնվում այն, որ Տրդատը Մամգունին իր հետ պատերազմի չվերցրեց պարսիկների դեմ։ Բայց մեզ ավելի հավանական է թվում այն, որ Մամգունը արհամարհանք, վիրավորանք է համարել այն բանը, որ Տրդատը իր նոր վասալին կալվածքներ չէր տվել և նա պետք է շրջեր ու կերակրվեր։ Մեր այս ենթադրությունը հիմնավորվում է նրանով, որ Սդուկ Սլկունին թագավորի դեմ ապստամբել էր իր կալվածները և ֆեոդալական իշխանությունը պահպանելու համար, հետևաբար Մամգունը իր դաշինքը նրա հետ կարող էր պատճառաբանել նրանով, որ թագավորը չէր կամեցել նրան կալվածներ տրամադրել և թերևս կարելի էր կալվածներ ձեռք բերել ապստամբ Սլկունու օգնությամբ։ Մյուս կողմից՝ հայտնի է, որ կալվածները թագավորի կողմից ֆեոդալներին տրամադրվում էին սրանց մատուցած ծառայությունների համար։ Մամգունը, որպես նոր վասալ, պետք է որոշ ծառայություն մատուցաներ և ապացուցեր իր հավատարմությունը թագավորին, որպեսզի կալվածք ստանար։

Խորենացու վկայության մէջ Տրդատն ասում է. «. . . որ ոք ածէ առ իս զնահապետն ազգին Սլկունեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեղս և դաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց։ Զոր յանձն առնոյր ճենազնեայն Մամգոնայ։»

Մի բան պարզ է՝ թե Սլկունու հետ դաշինք կնքելու և թե թագավորին ծառայություն մատուցանելու դեպքում Մամգունի հիմնական նպատակն էր վերջ դնել իր շրջելով կերակրվելուն և գյուղերի, դաստակերտների հավիտենական տեր ու իշխան դառնալ։ Հիրավի, երբ Մամգունին հաջողվում է սպանել Սդուկ Սլկունուն, «. . . Ուրախացեալ Տրդատայ, —վկայում է Խորենացին,— դրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր խոստացաւն, և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր՝ Մամգոնեան։»

Մեզ միանգամայն տրամաբանական է թվում, որ արհամարհական և վիրավորական է համարվել շրջել-կերակրվելը, որի համեմատությամբ հայրենատեր (կալվածների ժառանգական սեփականատեր) նախարար դառնալը մեծ առավելություններ ուներ ֆեոդալի համար, իսկ սոցիալական տեսակետից հանդիսանում էր զարգացման ավելի բարձր աստիճանի երևույթ։ Բայց այստեղից հետևում է, որ 3-րդ դարի վերջերին շրջել-կերակրվելն արդեն համարվում էր արհամարհական-վիրավորական մի բան, ուրեմն ֆեոդալական շահագործման այդ ձևն Արշակունյան թագավորության վերջին շրջանի հայկական ֆեոդալիզմի համար (3-րդ դարի վերջում և 4-րդ դարում) արդեն անցած շրջան էր և գործածվելի լոկ որպես անցյալի մնացորդ, որովհետև Հայաստանում հաստատված էր ժառանգական կալվածատիրությունը և ֆեոդալն իր փոքրիկ երկրի տերն էր ու իշխանը։ Մնում է ենթադրել, որ շրջել-կերակրվելը Հայաստանում տեղի է ունեցել Արշակունյան թագավորության առաջին շրջանում և ավելի վաղ ժամանակներում։

---

[1] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 228։ Ընդգծումը մերն է։ Բ. Ա.

[2] Նույն տեղ, էջ 229։

Շահագործման այս ձևն ըստ էության բնավճար հարկատվությունն է հանդիսանում, միայն թե նրա ավելի նախնական ձևը։ Հետագայում փոխանակ շրջել-կերակրվելու, ֆեոդալները, այդ թվում և թագավորները, նստած իրենց բերդերում և ապարանքներում, բնակչության կողմից մատակարարվում էին ուտելիքներով, մասամբ և հագուստեղենով ու կոշկեղենով։ Բնավճարի այս երկու ձևերն իրարից չինական պարիսպներով չեն բաժանված, բայց և մեկը մյուսից տարբերվում է. նրանք ենթադրում են սոցիալական տարբեր պայմանների առկայություն։ Առաջինն ավելի նախնական է, պրիմիտիվ։ Այն պայմանավորված է եղել ֆեոդալի՝ հողի սեփականատիրական իրավունքի դեռ ձևակերպված չլինելով, չինականների անձնական կախման նախնական թույլ աստիճանով և նրանով, որ ֆեոդալի շահագործման չափը նրա սպառողական պահանջներով էր սահմանափակված։ Ընդհակառակը, երկրորդ ձևը ենթադրում է ֆեոդալի իշխանության ամրապնդումը բնակչության նկատմամբ, նրա՝ հողի սեփականատիրական-կալվածատիրական իրավունքի առկայությունը, չինականների անձնական կախման համեմատաբար ավելի ուժեղացումը, հետևաբար և արտատնտեսական ճնշման ավելի խստացումը։

Արշակունյան թագավորության շրջանում Հայաստանում ժառանգական կալվածատիրության կողքին գոյություն ուներ և պայմանական հողատիրությունը այն, ինչ գերմանացիների մոտ հայտնի էր ֆլենց անվամբ, երբ հողը ֆեոդալին տրվում էր լոկ պայմանական օգտագործման համար և որոշ դեպքերում կարող էր ետ վերցվել։ Ֆեոդալների շրջել-կերակրվելն էլ կարող էր տեղի ունենալ սյուզերենի կողմից վասալին շնորհվող իրավունքով, որը պատմականորեն նախորդել է պայմանական հողատիրության իրավունքին։ Թե շրջել-կերակրվելու իրավունքը և թե պայմանական հողատիրության իրավունքը ենթադրում են կենտրոնացված պետության առկայությունը, որի կողմից և շնորհվում էին թե մեկը և թե մյուսը։ Կենտրոնացված պետության ստեղծման փորձերը Արշակունյան Հայաստանում հաջողությամբ չպսակվեցին, հետևաբար շրջել-կերակրվելու իրավունքը, ինչպես և պայմանական հողատիրությունը լայն տարածում ունենալ չէին կարող։ Այն հանգամանքը, որ հայկական հին մատենագրության մեջ մեզ չհաջողվեց գտնել այլ ուղղակի վկայություններ ֆեոդալները շրջել-կերակրվելու վերաբերյալ, բացատրվում է նախ նրանով, որ այդ երևույթը մեր մատենագիրների ժամանակ արդեն գոյություն չուներ, մասամբ էլ նրանով, որ այն տարածական երևույթ չէր։